

«Հազարամյակի մարտահրավեր»  
հիմնադրամ-Հայաստան» ծրագրի  
**Շահառուների Խորհրդի նոր  
խմբագրությամբ կանոնակարգը**

**Հաստատվել է**

«Հազարամյակի մարտահրավեր»  
հիմնադրամ-Հայաստան» ծրագրի  
Շահառուների խորհրդի

«22» նոյեմբերի 2008թ.-ի որոշմամբ

«Հազարամյակի մարտահրավեր»  
հիմնադրամ-Հայաստան» ծրագրի  
**Շահառուների Խորհրդի կանոնակարգը**

**Հաստատվել է**

«Հազարամյակի մարտահրավեր»  
հիմնադրամ-Հայաստան» ծրագրի  
Շահառուների խորհրդի

«22» օգոստոսի 2006թ.-ի որոշմամբ

**«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ  
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)**

## **1. Շահառուների խորհրդի առաքելությունը**

1.1 «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի (այսուհետև՝ Շահառուների խորհուրդ) առաքելությունը ՀՄՀ-Հայաստան ծրագրի առավել արդյունավետ իրականացման գործընթացին լայն հանրության մասնակցության և շահառու խմբերի իրազեկության, ինչպես նաև ծրագրի շահառուների շահերի պաշտպանության ապահովումն է:

## **2. Շահառուների խորհրդի կանոնակարգը**

2.1 Սույն կանոնակարգը սահմանում է «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի աշխատանքների կազմակերպման ու իրականացման կարգը:

2.2 Շահառուների խորհրդի յուրաքանչյուր կազմի լիազորությունները մեկնարկում են ծրագրային յուրաքանչյուր տարվա սկզբին՝ սեպտեմբերի 29-ին, և ավարտվում են ծրագրային յուրաքանչյուր տարվա ավարտին՝ սեպտեմբերի 28-ին:

2.3 Շահառուների խորհրդի կանոնակարգը մշակվում, փոփոխվում, լրացվում ու հաստատվում է Շահառուների խորհրդի կողմից՝ համաձայն Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության, ի դեմս Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2006թ. մարտի 27-ին կնքված Հազարամյակի մարտահրավեր համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր):

## **3. Շահառուների խորհուրդը**

3.1 Շահառուների խորհուրդը Համաձայնագրի պահանջներն ապահովելու համար, ծրագրի իրականացման բոլոր փուլերում իրականացնում է հասարակական մոնիտորինգ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ սերտ կապեր ստեղծելու, անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու և նրանցից խորհուրդներ ու առաջարկություններ ստանալու միջոցով:

3.2 Շահառուների խորհուրդը կազմված է քաղաքացիական հասարակության 15 ներկայացուցիչներից:

3.3 Շահառուների խորհրդի բոլոր անդամները ունեն հավասար ձայնի իրավունք քվեարկության և հարցերի քննարկման ժամանակ: Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք (կողմ կամ դեմ կամ ձեռնպահ):

3.4 Շահառուների խորհուրդն իր լիազորությունների մեկնարկից հետո մեկամսյա ժամկետում մշակում և հաստատում է իր տարեկան գործունեության ծրագիրը, որը ներառում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրագործման բոլոր բաղադրիչների հանրային մոնիտորինգի պլան:

3.5 Շահառուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի, հանձնաժողովների կազմման և գործարկման, արտագնա ուսումնասիրությունների և իր առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ այլ ձևերով:

3.6 Շահառուների խորհրդի հերթական նիստերը գումարվում են ամիսն առնվազն մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության: Շահառուների խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել Շահառուների խորհրդի երկու անդամների կամ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրենի կամ Կառավարման խորհրդի նախագահի պահանջով:

3.7 Շահառուների խորհրդի նիստերի գումարման և անցկացման կազմակերպումը, ինչպես նաև Շահառուների խորհրդի նիստերի պաշտոնական արձանագրությունների վարումը իրականացնում է Շահառուների խորհրդի քարտուղարը/օգնականը (այսուհետ՝

Շահառուների խորհրդի օգնական), ով ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրենի առաջարկությամբ նշանակվում է Շահառուների խորհրդի կողմից՝ մինչև «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի իրականացման ավարտը: Շահառուների խորհրդի օգնականը պարտավոր է Շահառուների խորհրդի բոլոր անդամներին տրամադրել ծանուցում Շահառուների խորհրդի նիստերի վերաբերյալ, որի մեջ նշված է նիստի վայրը, ամսաթիվը, ժամը և օրակարգը: Հերթական նիստի դեպքում ծանուցումը պետք է տրամադրվի նիստի գումարման ամսաթվից առնվազն 3 (երեք) օր առաջ, իսկ արտահերթ նիստի դեպքում՝ էլեկտրոնային փոստով, արտահերթ նիստի գումարման ամսաթվից առնվազն 48 ժամ առաջ և բանավոր ծանուցման դեպքում՝ տվյալ արտահերթ նիստի գումարման ամսաթվից առնվազն 48 ժամ առաջ:

3.8 Շահառուների խորհրդի նիստերը բաց են, հրապարակային, հաշվետու հանրությանը և մատչելի:

3.9 Շահառուների խորհրդի նիստերն իրավագոր են, եթե նիստին ներկա են Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը, ներառյալ նիստից բացակայող անդամների լիազոր ներկայացուցիչները (փոխարինողները):

3.10 Շահառուների խորհուրդն իրավունք ունի յուրաքանչյուր հերթական նիստի ընթացքում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ից ստանալ ծրագրի նպատակների և իրագործման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև աշխատանքային պլանի, կամ նախագծերի տարբերակները, ինչպես նաև Կառավարման խորհրդին ներկայացվող հաշվետվությունների օրինակները:

3.11 Շահառուների խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն Կանոնակարգով սահմանված այլ դեպքերի: Շահառուների խորհրդի անդամները կարող են ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է տվյալ նիստի արձանագրությանը:

3.12 Շահառուների խորհրդի նիստերը նախագահում են Շահառուների խորհրդի անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ Շահառուների խորհրդի անդամների անունների ալբենական կարգի: Շահառուների խորհրդի նույն անդամը չի կարող ավելի, քան մեկ անգամ անընդմեջ նախագահել Շահառուների խորհրդի նիստը: Նախագահողը Շահառուների խորհրդի նիստի ընթացքում պարտավոր է քվեարկության դնել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի վերաբերյալ Շահառուների խորհրդի անդամների կողմից կատարված յուրաքանչյուր առաջարկ: Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստի նախագահողը և Շահառուների խորհրդի օգնականը:

3.13 Շահառուների խորհրդի նիստերի բոլոր արձանագրությունները Շահառուների խորհրդի օգնականը չորս աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Շահառուների խորհրդի անդամներին, որից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, եթե անդամների կողմից առարկություններ կամ լրացումներ չեն լինում հրապարակվում է ՀՄՀ-Հայաստանի վեբ-կայքում: Շահառուների խորհրդի անդամների կողմից առարկություններ կամ լրացումներ լինելու դեպքում Շահառուների խորհրդի օգնականը նիստի արձանագրությունը ՀՄՀ-Հայաստանի վեբ-կայքում հրապարակում է նիստի արձանագրության վերջնական տարբերակը Շահառուների խորհրդի բոլոր անդամների հետ համաձայնեցնելուց հետո, բայց ոչ ուշ քան չորս աշխատանքային օրվա ընթացքում:

**4. Շահառուների խորհրդի անդամների իրավունքներն ու պարտականությունները**

4.1 Շահառուների խորհրդի անդամներն ընտրվում են Շահառուների խորհրդի Ընտրակարգում սահմանված կարգով ընտրելու իրավունք ստացած կազմակերպությունների կողմից: Շահառուների խորհրդի անդամները ունեն վերընտրվելու իրավունք:

4.2 Շահառուների խորհրդի անդամն իրավունք ունի կատարելու առաջարկություններ, քննարկման ներկայացնելու օրակարգային հարցեր, լինել հանձնախմբերի անդամ և իրականացնել Համաձայնագրով, սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

4.3 Եթե Շահառուների խորհրդի որևէ անդամ կամ նրա կողմից ներկայացված փոխարինողները չեն մասնակցում Շահառուների խորհրդի երկու հաջորդական նիստերի, ապա Շահառուների խորհրդի որոշման համաձայն դուրս են գալիս Շահառուների խորհրդի կազմից: Նիստերի հաճախման արդյունքներն ամփոփվում և Շահառուների խորհրդին են ներկայացվում Շահառուների խորհրդի օգնականի կողմից՝ Շահառուների խորհրդի հաջորդ նիստի սկզբում:

4.4 Շահառուների խորհրդի անդամի լիազորությունները դադարելու դեպքում խորհրդի կազմը համալրվում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ ծրագրի Շահառուների խորհրդի անդամության համար անցկացված վերջին ընտրությունների արդյունքներով առավել քվեներ ստացած անձով:

4.5 Շահառուների խորհրդի անդամի գրավոր լիազորությամբ Շահառուների խորհրդի նիստում նրան կարող է փոխարինել կազմակերպության կողմից լիազորված անձը: Շահառուների խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավասու է ներկայացնել 1-2 փոխարինողի Շահառուների խորհրդի գործունեության ողջ ժամանակահատվածի համար: Լիազորված անդամի իրավասությունը հաստատվում է Շահառուների խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

4.6 Շահառուների խորհուրդը սահմանում է ծրագրի Կառավարման խորհուրդ պատվիրակված անձանց Շահառուների խորհրդին ներկայացվող հաշվետվողականության կարգը:

**5. Շահառուների խորհրդի անդամի լիազորությունների դադարումը**

5.1 Շահառուների խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

- ա) ՀՄՀ-Հայաստան ծրագրի և Շահառուների խորհրդի անդամի կամ նրանց կողմից ներկայացվող կազմակերպությունների միջև շահերի բախման,
- բ) Շահառուների խորհրդի անդամի գրավոր հրաժարականի,
- գ) Սույն կանոնակարգի 4.3 կետում սահմանված դեպքերում,
- դ) Այլ հիմնավոր պատճառներով:

**6. ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման խորհրդում քաղաքացիական հասարակությունից Շահառուների խորհրդի պատվիրակված անդամները**

6.1 Շահառուների խորհուրդն իր լիազորությունների մեկնարկից հետո առաջին նիստի ընթացքում իր անդամների կազմից կատարում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության 5 ներկայացուցիչների ընտրությունը՝ փակ-գաղտնի քվեարարությամբ: Կառավարման խորհուրդ քաղաքացիական հասարակության անդամների պատվիրակումը կատարվում է մեկ տարի ժամկետով՝ մինչև Շահառուների խորհրդի հաջորդ կազմի կողմից Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության նոր ներկայացուցիչների ընտրությունը:

6.2 ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման խորհրդում քաղաքացիական հասարակությունից պատվիրակներ են համարվում այն հինգ անձինք, ովքեր Շահառուների խորհրդի փակ-գաղտնի քվեարկության արդյունքում հավաքել են առավել

քանակի ձայներ: Սահմանային հավասար քվեներ հավաքած թեկնածուներից հաղթողին որոշելու համար անցկացվում է վերաքվեարկություն: Վերաքվեարկության արդյունքում ստացված հավասար քվեների դեպքում անցկացվում է վիճակահանություն:

6.3 Կառավարման խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի (ների) լիազորությունները դադարելու դեպքում, Կառավարման խորհրդում նրա (նց) թափուր տեղը լրացնելու նպատակով սույն կանոնակարգով սահմանված կարգով կատարվում է Կառավարման խորհրդում քաղաքացիական հասարակության նոր ներկայացուցչի (ների) ընտրություն:

6.4 Կառավարման խորհուրդ պատվիրակված ներկայացուցիչները շարունակում են մնալ Շահառուների խորհրդում՝ որպես անդամներ:

6.5 Կառավարման խորհուրդ պատվիրակված ներկայացուցիչները Կառավարման խորհրդի յուրաքանչյուր նիստին հաջորդող Շահառուների խորհրդի նիստում, Շահառուների խորհրդի կողմից սահմանված կարգով պարտավոր են Շահառուների խորհրդին ներկայացնել հաշվետվություն:

## **7. Կառավարման խորհրդի անդամ/քաղաքացիական հասարակության ներկայացուցչի լիազորությունների դադարումը**

7.1 Կառավարման խորհրդի անդամի լիազորությունները դադարում են Շահառուների խորհրդի որոշմամբ հետևյալ դեպքերում՝

ա) ՀՄՀ-Հայաստան ծրագրի և Կառավարման խորհրդի անդամի կամ նրանց ներկայացնող կազմակերպությունների միջև շահերի բախման,

բ) Կառավարման խորհրդի անդամի գրավոր հրաժարականի,

գ) Կանոնակարգով սահմանված իր պարտականությունը և/կամ Շահառուների խորհրդի իրեն վերաբերվող որոշումը/ները չկատարելու,

դ) Կառավարման խորհրդի անդամների կամ անդամներից մեկի պարտականությունների կատարման թերացման (Կառավարման խորհրդի նիստերին բացակայություններ, Շահառուների խորհրդին տրվող ընթացիկ հաշվետվությունների հարցում թերացումներ, ծրագրի շահառուների շահերի ստորադասում այլ շահերի և այլն):

ե) Այլ հիմնավոր պատճառներով:

7.2 Քաղաքացիական հասարակությունից Կառավարման խորհուրդ պատվիրակված ներկայացուցչի լիազորությունները դադարում է Շահառուների խորհրդի կազմի ձայների 2/3-ի որոշմամբ:

## **8. Շահերի բախում**

8.1 Համաձայնագրի 3.2 (b) կետով սահմանված՝ Շահերի բախմանն առնչվող դրույթները տարածվում են նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի և Կառավարման խորհրդի անդամների նկատմամբ:

8.2 Շահառուների խորհրդի և/կամ Կառավարման խորհրդի կազմում ընտրված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պարտավոր են ծրագրի վերոնշյալ պաշտոններից հրաժարական տալ, եթե իրենք անձամբ և/կամ իրենց հետ փոխկապակցված անձինք և/կամ այն կազմակերպությունը, որտեղ նրանք հանդիսանում են սեփականատերեր կամ զբաղեցնում են ղեկավար պաշտոններ՝ ֆինանսական պատվերի հայտ է ներկայացրել ՀՄՀ-Հայաստան ծրագրին:

8.3 ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդում և Կառավարման խորհուրդ քաղաքացիական հասարակությունից պատվիրակվող անձինք չեն կարող լինել.

- ՀՀ պետական և տեղական իշխանությունների կառավարման, վարչական մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք,
- ՀՀ պետական և համայնքային ծառայողներ,
- ՀՄՀ-Հայաստան ծրագրից փաստացի ֆինանսական պատվեր ունեցող ֆիզիկական անձինք և իրավաբանական անձանց սեփականատերերը կամ ղեկավար մարմինների ներկայացուցիչները:

8.4 Շահառուների խորհրդի անդամը հարցերի քննարկման ժամանակ պարտավոր է հայտնել շահերի բախման հնարավոր՝ իրեն հայտնի բոլոր դեպքերի մասին:

## **9. Բնապահպանական դիտորդ**

9.1 Շահառուների խորհուրդը սույն Կանոնակարգի 9.5-9.7 կետերով սահմանված կարգով Կառավարման խորհուրդ է պատվիրակում բնապահպանական ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպության մեկ ներկայացուցիչ, որը հանդիսանում է Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ և մասնակցում է Կառավարման խորհրդի նիստերին՝ առանց ձայնի իրավունքի:

9.2 Այն դեպքում, երբ Կառավարման խորհրդի Շահառուների խորհրդի հինգ պատվիրակներից մեկը հանդիսանում է բնապահպանական ուղղվածություն ունեցող ՀԿ-ի ներկայացուցիչ, ապա տվյալ անդամը միաժամանակ հանդես է գալիս նաև որպես Բնապահպանական դիտորդ: Նման դեպքում սույն Կանոնակարգի 9.1 կետը չի գործում:

9.3 Բնապահպանական դիտորդի լիազորությունները գործում են մեկ տարի ժամկետով՝ մինչև Շահառուների խորհրդի հաջորդ կազմի կողմից Բնապահպանական դիտորդի նոր ներկայացուցիչ ընտրությունը:

9.4 Շահառուների խորհուրդը կարող է ընտրել նաև Բնապահպանական դիտորդի փոխարինողի, որը պարտավոր է մասնակցել Կառավարման խորհրդի նիստերին՝ Բնապահպանական դիտորդի՝ Կառավարման խորհրդի նիստին բացակայության պարագայում:

9.5 Բնապահպանական դիտորդի թեկնածուները հետաքրքրվածության հայտեր են ներկայացնում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին, որոնք Շահառուների խորհրդի օգնականի կողմից համակարգվելուց հետո, ներկայացվում են Շահառուների խորհրդին:

9.6 Հետաքրքրվածության հայտերն ուսումնասիրելուց հետո Շահառուների խորհուրդն իրավունք ունի սույն Կանոնակարգին և համապատասխան հայտի չափանիշներին համապատասխանող Բնապահպանական դիտորդի թեկնածուներին հրավիրել հարցազրույցի:

9.7 Բնապահպանական դիտորդն ընտրվում է Շահառուների խորհրդի ձայների պարզ մեծամասնությամբ՝ փակ-գաղտնի քվեարկության արդյունքում:

9.8 Բնապահպանական դիտորդն իրականացնում է Համաձայնագրի Հավելված 1-ի 3 (d) (B) (ii) կետով և սույն Կանոնակարգով իրեն վերապահված լիազորությունները:

9.9 Բնապահպանական դիտորդի նկատմամբ կիրառվում են սույն Կանոնակարգի 7-րդ և 8-րդ կետերում սահմանված դրույթները: